Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Մարինե Ինջիգուլյան
«Ապագա» ՀԿ

Ղարաբաղյան հակամարտություն. նախապատմություն, առկա վիճակ եւ զարգացումներ

Տարիներ շարունակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում /ԼՂԻՄ/ Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվում էր հակահայկական քաղաքականություն: Նրանց նպատակն էր Նախիջևանի Ինքնավար Հանրապետության օրինակով լիակատար հայաթափել և բնակեցնել ադրբեջանցիներով: Ոտնահարվում էր հայերի իրավունքներն ու ազգային արժեքները:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանը, երկրի սահմանադրությանը համապատասխան, որոշում ընդունեց դիմել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին:

Հայաստանում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ելույթների մեծ ալիք սկսվեց: Մայրաքաղաք Երևանի Թատերական /այժմ՝ Ազատության/ հրապարակում սկսվեցին կազմակերպվել հանրահավաքներ: Առաջին հանրահավաքների կազմակերպիչների և ղեկավարների թվում էին տնտեսագետ Իգոր Մուրադյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը և ուրիշներ: Հանրահավաքներին ներկա էին լինում հազարավոր մարդիկ և պաշտպանում Արցախը:

Խորհրդային միության պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի՛ ունեցան հարյուր հազարանոց հանրահավաքներ և ցույցեր: Ժողովուրդը ցույցերի էր դուրս գալիս ԽՍՀՄ պետական դրոշներով, Վ.Ի.Լենինի, Մ.Ս.Գորբաչովի դիմանկարներով, ինչպես նաև «Լենին-կուսակցություն-Գորբաչով», «Հանուն վերակառուցման, ժողովրդավարության և հրապարակայնության» կոչերով:

Դեպքերի հետագա ընթացքը ժողովրդին ստիպեց նորից ու նորից հավաքվել Երևանի գլխավոր պողոտայում, Մատենադարանի առջև, Ազատության հրապարակում: Ելույթներ էին ունենում հանրապետության գիտության, մշակույթի ճանաչված գործիչներ, բանվորներ, ուսանողներ, վետերաններ: Նրանց թվում էին՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր

Համբարձումյանը, արձակագիր Սերո Խանզադյանը, դերասան Սոս Սարգսյանը և ուրիշներ:

Սակայն կենտրոնը ի սկզբանե Ղարաբաղյան շարժման նկատմամբ բացասական դիրք գրավեց: Պատահական չէր, որ փետրվարի 21-ին ԽՍԿԿ Կենտկոմի քաղբյուրոն հապճեպ որոշում ընդունեց. Ղարաբաղյան հարցի արդարացի լուծմանը ձգտող ժողովրդական շարժումը որակավորվեց որպես ծայրահեղական:

Ղարաբաղյան շարժումը Հայաստանում և Արցախում կոորդինացնելու նպատակով տնտեսագետ Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ մարտի սկզբներին, ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտե: Հանրապետության գրեթե բոլոր քաղաքներում, շրջաններում ստեղծվեցին «Ղարաբաղ» կոմիտեներ, որոնք և շարժմանը կազմակերպչական նոր ձև տվեցին:

Ադրբեջանական իշխանությունները, ԽՍՀՄ կենտրոնական մարմինների թողտվության պայմաններում, շարժմանը հակադրեցին բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը: 1988թ. փետրվարի 27-29 Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթ քաղաքում կազմակերպվեց տեղի հայ բնակչության ջարդ: Պաշտոնական տվյալներով 27 հայ են սպանվել, խոշտանգվել և տանջամահ են արվել հարյուրավոր անպաշտպան մարդիկ: Փետրվարի 29-ի գիշերը, երեք օր ուշացումով, միութենական կենտրոնական իշխանությունները զորք մտցրին Սումգայիթ: Ավելի քան 3000 փախստականներ պատսպարվեցին Հայաստանում, իսկ մնացածները ցրվեցին ամբողջ երկրով մեկ:

Սումգայիթյան ոճրագործությունը չընկճեց հայ ժողովրդին, ընհակառակը, նրան ավելի համախմբեց: 1988թ. մարտին Ղարաբաղում և Հայաստանում վերսկսվեցին բողոքների ցույցերը. պահանջվում էր Արցախի հիմնահարցի արդարացի լուծում, պատժել սումգայիթյան եղեռնագործներին, տալ կատարվածի քաղաքական գնահատականը: Այս ամենին զուգընթաց Երևանում սկսվեցին զանգվածային գործադուլներ, հացադուլներ և նստացույցեր: Իշխանություններին ոչինչ չէր մնում անել, և 1988թ. հունիսի 15-ին իր աշխատանքներն սկսեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Այն ընդառաջ գնալով ԼՂԻՄ-ի մարզխորհրդի դիմումին, համաձայնություն տվեց մարզը Հայաստանի կազմի մեջ մտնելուն և այդ հարցը դրականորեն լուծելու խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին:

Մեկ ամիս հետո՝ հուլիսի 18-ին, Ղարաբաղի խնդրի շուրջ Մոսկվայում հրավիրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության

նիստ: Այստեղ հայ ժողովրդի ներկայացուցիչները՝ ակադեմիկոս Վ.Համբարձումյանը, Ս.Համբարձումյանը, գրող Վ.Պետրոսյանը, ԼՂԻՄ-ի կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Հ.Պողոսյանը և ուրիշներ իրենց ելույթներում դատապարտեցին սումգայիթյան ոճրագործությունը: Նրանք մեկ անգամ ևս ընգծեցին Արցախը Մայր Հայաստանի միավորելու անհրաժեշտությունը: Սակայն ԽՍՀՄ-ի բարձրագույն իշխանությունը մերժեց խնդրանքը՝ մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանին միավորելու մասին:

Լեռնային Ղարաբաղում իրավիճակը ավելի էր սրվում: 1990թ. ընթացքում հայ բնակչությունը արտաքսվեց Խանլարի շրջանի գյուղերից, ավերվեցին ու հայաթափվեցին Արցախի 20-ից ավելի գյուղեր: Զանգվածային բռնությունների ալիքն իր գագաթնակետին հասավ 1991թ-ի ապրիլ-մայիս ամիսներին: Պատերազմ սկսվեց Գետաշենի և Շահումյանի հայ բնակչության դեմ: Դաժան մարտերով գրավեցին Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերը: Այստեղ, անօրինական սխրանքներ գործելով, զոհվեցին հայկական ինքնապաշտպանության ջոկատների մարտիկներ Սիմոն Աչիքգյոզյան, Թաթուլ Կրպեյանը, Արթուր Կարապետյանը և ուրիշներ:

1991թ-ի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, արտահայտելով Ղարաբաղի ժողովրդի կամքը, ընդունեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»: Սկսվեց ԼՂՀ անկախության և կայացման գործընթացը:

Մի քանի ամիս անց՝ դեկտեմբերի 1-ին, միջազգային դիտորդների մասնակցությամբ անցկացվեց հանրաքվե և Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը քվեարկեց անկախության օգտին:

1992թ. հունվարին ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը:

Մինչ այդ՝ 1991թ. դեկտեմբերից, ԼՂՀ-ում սկսվել էր իսկական պատերազմ: Ադրբեջանական իշխանությունները Ղարաբաղի տարբեր հենակետերից հրթիռահրետանային հարձակում կազմակերպեցին հայկական բնակավայրերի վրա: Այդ ամենը ուղեկցվում էր մեծ ավերածություններով և մարդկային զոհերով: Առավելապես տուժեց մայրաքաղաք Ստեփանակերտը:

Ամբողջ ծմռան ընթացքում հայ ազատամարտիկները ծանր մարտեր մղեցին թշնամու ուժերի դեմ: 1992թ. մայիսի 9-ին գնդապետ

Արկադի Տեր-Թադևոսյանի հրամանատարությամբ, փայլուն գործողություններով, ազատագրվեց Ղարաբաղի սիրտը՝ հինավուրց Շուշին:

Մեկ տարի անց, գարնանը ռազմաճակատի գիծը Ղարաբաղում կայունացավ: Ինքնապաշտպանության ուժերն անցան հարձակման և գրավեցին Քելբաջարը: Վերջինիս գրավումով Հայաստանի և Ղարաբաղի անմիջական սահմանն ընդարձակվեց և դարձավ ավելի ապահով: Այդ կռիվներում ծնունդ առավ և ձևավորվեց ԼՂՀ-ի բանակը:

Այսօր մենք արդեն տոնում ենք Լեռնային Ղարաբաղի 15-ամյակը: Այս տարիներին շատ հասարակական, բարեգործական, երիտասարդական, առողջապահական, իրավաբանական կազմակերպություններ ձգտել և ձգտում են իրենց առաջին քայլն անել Լեռնային Ղարաբաղում: Օգնել այնտեղի ժողովրդին, ճիշտ ուղղություն ցույց տալ երիտասարդներին՝ կյանքի հմտությունները ճիշտ դասավանդելով:

«Ապագա» իրավապաշտպան, սոցիալական և մշակութային հասարակական կազմակերպությունը, լինելով նորաստեղծ կառույց, ձգտում է ամեն ինչ անել, որպեսզի աջակցի երիտասարդության ծրագրերի իրականացմանը, ակտիվացմանն ու համախմբմանը:

Ինչ փորձություններով անցան հազարավոր մարդիկ, քանի հարյուրավոր երիտասարդներ նահատակվեցին հանուն իրենց հայրենիքի և ապագա սերունդների ազատության: Ինչքան դժվարությունների միջով անցավ աշխատավորն ու ուսանողը, մինչև 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»:

Այսօր, առկա վիճակում, Ղարաբաղը նորից ունի շատ չլուծված խնդիրներ: Դրանցից երկուսը զբաղեցնում են առաջին հորիզոնականները:

Ղարաբաղի սահմանադրական և, ընդհանրապես, իրավական կարգավիճակի վրա ազդում են նաև այլ գործոններ՝ քաղաքացիությունը, իրավունքների ու ազատությունների սկզբունքներն ու երաշխիքները:

Օրինակ՝ Աֆրիկայի պետությունների մեծ մասը, հետևում է այս սկզբունքին՝ «Հողի սկզբունքին»: Այս դեպքում արդեն պարզ է, թե Ղարաբաղը ներկա վիճակում ի՞նչ սկզբունք կունենա:

Ինչպես նաև, «երեխայի քաղաքացիությունը որոշվում է նրա ծննդյան վայրով և կախված չէ ծնողների քաղաքացիությունից» այս սկզբունքին հետևում են Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրներ: Ներկա վիճակում Լեռնային Ղարաբաղի քաղաքացին կամ երեխան, ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարգավիճակ կունենա այլ երկրներում: Այստեղ

խոսքը կգնա Սահմանադրության, երեխաների իրավունքի, մարդու իրավունքների, կոնվենցիաների և այլ իրավական ակտերի խախտում:

ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլուխն սկսվում է ՀՀ քաղաքացիությանը նվիրված հոդվածով. «ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու և դադարեցնելու կարգը սահմանվում է օրենքով»: ԼՂ ազգությամբ հայերը քաղաքացիությունը ձեռք են բերում պարզեցված կարգով: ԼՂ-ի քաղաքացին չի կարող լինել այլ պետության քաղաքացի, իսկ այսօրվա Սահմանադրությունը երկքաղաքացիության հարցը չի կարգավորում:

Ներկա վիճակում ԼՂ-ի քաղաքացիները ձգտում են այլ քաղաքացիություն ունենալ: Արդյո՞ք ժամանակը չէ, որ կարգավորվի ԼՂ-ի քաղաքացիների քաղաքացիության հարցը:

Մ.Ս.Գորբաչովը հայ ժողովրդի ներկայացուցիչներին վստահեցրեց, որ ԼՂ-ը կապրի մի նոր ծաղկունք, մի նոր վերածնունդ, իր իսկ բառերով՝ «ռենեսանս»:

ՀՀ անկախության հռչակումից հետո ԼՂ-ում սկսեց զարգանալ մշակույթն, արվեստն, արհեստն: Վերակառուցվեցին թերի թողնված նկեղեցիները, հայկական մեր սուրբ տաճարներում նորից լսվեց պատարագի ձայնը, այդ աղոթքի շնորհիվ էլ այսօր օրհնություն կա ԼՂՀ-ում: Եվ հիմա արցախցին անկախ է և ազատ, կրթվում է և աշխատում, երգում է և պարում... Սա է բոլորիս ցանկությունն ու նպատակը:

Հասմիկ Շինոյան
ՀՅՊ ՍԵՄ

Ղարաբաղյան հակամարտության նախապատմություն...

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը եւ հանրապետության ԼՂՀ Հռչակագրից բխած բոլոր իրավաքաղաքական բայլերը իրականացվել են միջազգային իրավունքի եւ նախկին ԽՍՀՄ գրենադրության հիմնարար սկզբունքներին համապատասխան: Ադրբեջանի Հանրապետությունը չի օգտագործել հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ ունեցած բոլոր խնդիրները երկխոսության միջոցով կարգավորելու հնարավորությունը, այլ իրականացնելով էթնիկական անհանդուրժողականության քաղաքականություն՝ դիմել է ուժի ապօրինի կիրառման եւ առայսօր չի հրաժարվում հակամարտությունը ռազմական ճանապարհով կարգավորելու քաղաքականությունից: Հակամարտության մեջ ներքաշված ժողովուրդները կրել են մարդկային եւ նյութական ահռելի վնասներ եւ շարունակում են

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ